UDC 37.033+504.06
UDC 37.033+504.06
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.067

ԿԱՆԱՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Խաչատրյան Նոննա
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
nonnakhachatryan@ysu.am
https://orcid.org/0009-0000-3916-6735
Կարապետյան Սվետլանա
տնտ. գիտ. թեկնածու
Հյուսիսային համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
sveta.karapetyan@yahoo.com
https://orcid.org/0009-0004-2249-6948

Ամփոփում

Կանաչ կրթության պահանջարկը կտրուկ մեծանում է մոլորակի բնակչության աճին զուգընթաց: Մարդիկ իրենց արտադրական և կենցաղային գործունեությամբ հսկայական վնաս են պատճառում երկիր մոլորակին: Հետամուտ լինելով մասնավոր շահերի՝ մարդիկ հիմնականում ուշադրություն չեն դարձնում շրջակա միջավայրի վրա իրենց գործունեության բացասական հետևանքներին, որն ի վերջո ձևավորում է բնապահպանական և սոցիալական ռիսկեր, խաթարում է տնտեսության կայուն զարգացումը: Այս առումով կարևորվում է կանաչ կրթության այնպիսի մեթոդաբանության մշակումը, որը թիրախավորվում է անձերի ուսումնառությանը ողջ կյանքի ընթացքում [9, 75]: Սակայն մյուս կողմից, տեսամեթոդական առումով դեռևս չկա միասնական մոտեցում կանաչ կրթության կազմակերպման շուրջ [7, 89-90], չնայած որ նախադպրոցական կրթօջախներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ անձերին ծանոթացնում են շրջակա միջավայրի պահպանման վարքագծային նորմերին, մեկնաբանում կայուն զարգացման սկզբունքները: Դրան զուգահեռ ձևավորվում է շրջակա միջավայրի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի գիտակցում նաև ոչ ֆորմալ, և անգամ ինֆորմալ կրթության պարագայում: Հետևաբար ներկայումս հիմնախնդիր է առաջանում կանաչ կրթությունը կազմակերպելու այնպես, որ այն շարունակաբար ուղեկցի մարդուն իր ողջ կյանքի ընթացքում և ճկուն տրանսֆորմացիոն հիմքեր ունենա տարիքային տարբեր խմբերի շրջանում:

Բանալի բառեր՝ *կանաչ կրթություն, կայուն զարգացում, կանաչ վարքագիծ, շրջակա միջավայրի պաշտպանություն, էկոբարյացակամություն, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն:*

Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Կանաչ կրթությունը կազմակերպվում է տարիքային տարբեր խմբերում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթաձևերի շրջանակում: Այս առումով, կարևորվում են կանաչ կրթության համապարփակ մեթոդաբանության ձևավորման հիմնախնդիրների վերհանումն ու դրանց լուծման հնարավորությունների վերլուծությունը, ինչն էլ հանդիսացել է տվյալ հետազոտության նպատակը:

Գիտական նորույթը: Նորովի ներկայացվել են կանաչ ուսումնառության մեթոդաբանության ձևավորման առանցքային ուղղությունները հարատև կրթության ընթաց-

քում, որով գնահատվում են կանաչ կրթության վերջնարդյունքները շրջակա միջավայրի պաշտպանությանը նպաստող անձի վարքագծային դրսևորումների տեսանկյունից:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակությունների վերլուծություն: Կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանական հիմնախնդիրներին են անդրադարձել մի շարք հետազոտողներ (Ադել Ֆ., Արբիդանե Ի., Բրովնինգ Մ., Ճուղուրյան Ա, Մարտիրոսյան Ն, Չակռաբորթի Ա., Քեյզիս Մ. և ուրիշներ): Սակայն հեղինակները կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանական վերլուծություններին հիմնականում ցուցաբերել են ոլորտային մոտեցում՝ համալիր փոխառնչություններ չսահմանելով տարբեր կրթաձևերի շրջանակում: Հոդվածում փորձ է արվել կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանությունը ներկայացնելու առավել ընդգրկուն տեսանկյունից՝ վերլուծելով կանաչ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթաձևերի շաղկապման հնարավորությունները, շեշտադրումներ կատարելով նաև կանաչ դաստիարակության գիտակցման, կանաչ վարքագծային նորմերի իրագործման և անհատի կանաչ ստեղծարարության ունակությունների ձևավորման վրա:

Հետազոտության տեսական նշանակությունը: Կանաչ կրթության բաղադրիչները որոշակի առումով միշտ էլ ընդգրկված են եղել կրթական տարբեր ծրագրերում: Սակայն տեսականորեն խնդիր չի դրվել ներդաշնակեցնելու և համակարգելու այդ ծրագրերը անձի էկոբարյացակամության գիտակցման տեսանկյունից: Հետազոտության տեսական նշանակությունը կանաչ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթաձևերի մեթոդաբանական համակցման նպատակադրումն է:

Հետազոտության գործնական նշանակությունը: Կանաչ կրթության համապարփակ մեթոդաբանության շրջանակի մշակումն ու ներդրումը կօժանդակեն շրջակա միջավայրի էկոբարյացակամության ձևավորմանը և կանաչ վարքագծային նորմերի արդյունավետ կիրառմանը ազգաբնակչության շրջանում:

Հիմնական նյութի շարադրանքը: «Կանաչ վարքագիծ» ցուցաբերող մարդիկ համապատասխան կրթության շնորհիվ են մտահոգություն դրսևորում կայուն զարգացման խնդիրների շուրջ և հոգատարություն ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ: Ընդ որում, «Կանաչ դաստիարակությունը» մարդիկ ստանում են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանապարհով: Եթե ուսումնական կրթական հաստատություններում կազմակերպվող ֆորմալ կրթությունը հետամուտ է լինում «կանաչ աշխատատեղերի» ստեղծմանը (էկո աուդիտորներ, բնապահպաններ, էկո խորհրդատուներ և այլն)՝ շրջանավարտին կրթական ծրագրի ավարտին տրամադրելով բնապահպանական ոլորտին առնչվող վերջնարդյունքներ, ապա ոչ ֆորմալ կրթությամբ անձերը, ստանալով հավաստագրեր, բարելավում են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում [1, 54-56]:

Ֆորմալ «կանաչ կրթությունը» մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն է ապահովում, ինչն իրականացնում է համապատասխան ուսումնական հաստատությունը, հանգեցնում տվյալ մակարդակի բնապահպանության մասնագետների որակավորման աստիճանի շնորհմանն ու դիպլոմավորմանը: Ոչ ֆորմալ «կանաչ» ուսուցումը կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն է ենթադրում, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպության ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման: Ինչ վերաբերում է ինֆորմալ «կանաչ» կրթությանը, ապա այն անձի

առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և տարբեր այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ է ձևավորում, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Կանաչ կրթության դասակարգման մոտեցումները[1]

Ֆորմալ «կանաչ կրթության» ինստիտուտն ապահովում է հասարակության սոցիալական կայունությունն ու ինտեգրումը՝ կատարելով հետևյալ գործառույթները.

- բնապահպանական մշակույթի փոխանցում և տարածում հասարակության մեջ, քանզի կրթության միջոցով է, որ կայուն զարգացման գիտելիքները, «կանաչ ձեռնարկատիրության» նվաճումները, բարոյական չափանիշները, ի թիվս այլոց, փոխանցվում են սերնդեսերունդ,
- երիտասարդ սերունդների շրջանում հասարակության մեջ գերիշխող վերաբերմունքի, «կանաչ զարգացման» արժեքային կողմնորոշումների ու իդեալների ձևավորում,
- գիտական հետազոտությունների և բնապահպանական բացահայտումների գործընթացում իրականացվող սոցիալական ու մշակութային փոփոխություններ (ֆորմալ կրթության ժամանակակից հաստատությունները և առաջին հերթին համալսարանները գիտելիքի բոլոր ճյուղերի հիմնական կամ գիտական կարևորագույն կենտրոններից մեկն են):

Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ [3, 69-71]:

[1] Կազմել են հեղինակները:

Ոչ ֆորմալ ուսումնառության օրինակներ են.

- կազմակերպություններում աշխատողների համար իրականացվող վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացները,
- մասնագիտական և ոչ մասնագիտական ուսուցման դասընթացները, որոնք իրականացվում են ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններում, այդ թվում՝ պետական ուսումնական հաստատություններում,
- տարբեր միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի կողմից իրականացվող թիրախային դասընթացները,
- տարաբնույթ նախապատրաստական դասընթացները, այդ թվում՝ մասնավոր կրկնուսույցների գործունեությունը:

Այս կրթությանը մեծ ուշադրություն սկսեցին դարձնել այն ժամանակ, երբ ֆորմալ կրթությունն այլևս չէր կարող մասնակիորեն ապահովել այն, ինչ երիտասարդներին անհրաժեշտ էր անձնական և մասնագիտական զարգացման համար: Փաստացի, ոչ ֆորմալ կրթական համակարգը ձևավորվեց ի պատասխան այն մարտահրավերների, որոնք նոր դարաշրջանը ներկայացրեց ֆորմալ կրթական համակարգին: Ոչ ֆորմալ կրթական համակարգը ձևավորվեց որպես ուսումնառության բացերը լրացնող և «կանաչ» մտածելակերպով քաղաքացի ձևավորող համակարգ, որը չէր հավակնում և չի էլ կարող հավակնել փոխարինելու ֆորմալ կրթական համակարգի կողմից տրվող մասնագիտական կրթությանը [2, 429]:

Ֆորմալ կրթության հիմնական հատկանիշների համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցները, այնուհանդերձ, առաջնորդվում են դեպի ոչ ֆորմալ ծրագրեր, քանի որ այս պարագայում առաջարկվում է որոշակի փորձ, որը նպատակադրվում է ձեռք բերել շրջանավարտների կողմից:

Ավելին, ոչ ֆորմալ կրթությունը վերաբերում է երիտասարդների անհատական և սոցիալական կրթության պլանավորված, կառուցվածքային ծրագրերին և գործընթացներին, որոնք նախատեսված են մի շարք կարողությունների և հմտությունների կատարելագործման համար՝ ֆորմալ կրթական ծրագրից դուրս: Ուստի ոչ ֆորմալ կրթությունը կարող ենք դիտարկել որպես կանաչ կրթության յուրահատուկ ձև, որը հնարավորություն է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերելու, ինչպես նաև զարգացնելու հարափոփոխ պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ:

Ոչ ֆորմալ կրթությունը ներառում է դասընթացներ, վերապատրաստումներ, կարճաժամկետ ծրագրեր, որոնք առաջարկվում են կրթության ցանկացած փուլում կամ աշխատանքային գործունեության ընթացքում: Հիմնականում ոչ ֆորմալ կանաչ կրթությունն ապահովում է ավելի ճկուն ուսուցման ծրագրեր, որոնք բավարարում են սովորողների կարիքները, ավելի մատչելի են ժամանակի և ուսուցման վայրի առումով:

Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և անընդհատ զարգացնել շարունակաբար փոփոխվող շրջակա միջավայրի պաշտպանության պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Նոր գիտելիքներ ստանալու գործընթացը հաճախ տեղի է ունենում ֆորմալ կրթական տարածքից դուրս՝ ոչ ֆորմալ պայմաններում, որտեղ կան հատուկ սահմանված նպատակներ, գործիքակազմ, մեթոդներ, որոնք օգնում են առավել արդյունավետ և հետաքրքիր դարձնել կրթվելու գործընթացը:

«Կանաչ դաստիարակության» գործընթացը ոչ պակաս արդյունավետություն է ցուցաբերում ինֆորմալ կրթության համատեքստում, երբ անձը ամենօրյա գործունեության ընթացքում տեղեկատվություն է ստանում բնապահպանական ոլորտում իր վարքագծային դրսևորումների վերաբերյալ: Կենսափորձով ձեռք բերված կրթությունը (ինֆորմալ կրթությունը) բնական կրթական գործընթաց է, որից անձը ողջ կյանքի ընթացքում առօրյա շփումների միջոցով ձեռք է բերում բազմաբնույթ արժեքներ, գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ և [5, 158]: Այս գործընթացի տարրեր կարող են դիտվել, օրինակ, ընտանիքի անդամների, ընկերների, միջավայրի հետ հաղորդակցությունը, զանգվածային լրատվության միջոցները, գրականությունը, համացանցը և տեղեկատվական այլ աղբյուրներ: Հետևաբար կանաչ կրթությունը, որը կյանքում, բայց հաճախ ինքնաբերաբար, առանց ուսումնառության կանոնակարգված մեթոդաբանության, պետք է վերագրվի ինֆորմալ կրթությանը:

Ինֆորմալ կանաչ կրթությունն ընդգրկում է ուսուցման լայն շրջանակ, որին բոլոր մարդիկ մասնակցում են իրենց կյանքում ամեն օր: Այն կարող է լինել ցանկացած տեսակի տեղեկատվություն, որը սովորողը ստացել է հեռուստատեսությունից, ռադիոյից, համացանցից, ընկերների և/կամ ընտանիքի հետ զրույցներից:

Բնականաբար, որքան բարձր լինի ինֆորմալ կանաչ կրթական գործունեության մեջ ներգրավված համակարգվածության ու կազմակերպվածության աստիճանը, այնքան այն ավելի մոտ կլինի ոչ ֆորմալ կրթությանը: Առկա է նաև գործնական հնարավորություն՝ ինֆորմալից ֆորմալին կամ ոչ ֆորմալին անցնելու համար: Այսպես, բնության թանգարան այցելությունը կարող է լինել ինֆորմալ կրթության օրինակ, եթե բխում է ուսումնառուի անձնական և ինքնաբուխ որոշումից, քանի որ դա ուղղակիորեն կախված չէ նրա կրթական գործունեության հետ: Այնուամենայնիվ, եթե նման այցը սահմանված շրջակա միջավայրի ուսումնական ծրագրի մաս է կազմում և սովորողներից պահանջում է գրավոր հաշվետվություն, որտեղ պետք է լինի նաև ուսուցչի գնահատականը, դա կլինի գործունեություն, որը կապված է կամ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթության հետ: Սակայն մեծ մասամբ ուսումնառության այս ձևը չի համապատասխանում կրթության կազմակերպված և համակարգված տեսակետին: Հասկանալի է, որ ինֆորմալ կրթության մեջ պարտադիր չէ ներառել նպատակներ և դրանցից բխող խնդիրներ: Ինֆորմալ կրթությունը չունի այն կառուցվածքն ու մակարդակները, որոնք ունեն ֆորմալ դպրոցները: Դա ավելի բնական է և ինքնաբուխ, այսինքն՝ «կանաչ տեղեկատվությունը», որը ձևավորվում է կրթության այս ձևի միջոցով, գալիս է նաև սեփական փորձից սովորելով:

Կանաչ ինֆորմալ կրթությունը չունի նաև ուղեցույցներ, ուսումնական ծրագրեր կամ չափորոշիչներ: Քանի որ չկան ուսումնական ծրագրեր կամ ստանդարտացված թեստեր, դժվար է քանակապես չափելի դարձնել կամ ստուգել, թե որքան լավ է սովորողը հասկանում կամ յուրացնում «կանաչ տեղեկատվությունը»: Եթե ինֆորմալ կրթության համար չկան հատուկ սահմանված նպատակներ ու խնդիրներ, ապա դա չի նշանակում, որ այս կրթությունը լիովին անօգուտ է և չի կարող կիրառություն ունենալ «կանաչ դաստիարակության» ոլորտում [7, 102]:

Հետևաբար «կանաչ կրթությունը» բազմաշերտ և բազմաոլորտ է, որի իրականացումը տեղի է ունենում անձի ողջ կյանքի ընթացքում և կարևոր դերակատարում է ստանձնում «կանաչ վարքագծային» արտահայտման գործիքակազմում: Այս առումով կանաչ կրթության մեթոդաբանությունը ձևավորվում է հիմնականում երեք ուղղությամբ (տե՛ս գծապատկեր 2):

Առաջին ուղղությունը անձին ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում, և կանաչ ուսումնառությունը թերևս սկսվում է նախադպրոցական տարիքից: Կանաչ կրթության մեթոդաբանության երկրորդ ուղղությունը առավել արդյունավետ է գործում, երբ անձը էկոդաստիարակչական հասունություն է ապրում, գիտակցորեն է մոտենում և հետևողական լինում շրջակա միջավայրի պահպանման վարքագծային նորմերին: Երրորդ ուղղությունը կանաչ կրթության ծառայությունների մատուցման մեթոդաբանության առավել բարձր նշաձողերին է հետամուտ լինում՝ նպատակ ունենալով անձի մոտ ձևավորելու ստեղծարար վարքագիծ շրջակա միջավայրի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի խրախուսման համար: Այսպես, եթե դպրոցի աշակերտին ուսուցանվում են շրջակա միջավայրի պահպանման կարևորությունը և դրան նպաստող անձի վարքագծային նորմերը, ապա համալսարանական միջավայրում կրթական ծառայություններ մատուցելիս փորձ է արվում ուսումնառուի մոտ ձևավորելու ստեղծարար մտածելակերպ իր մասնագիտության շրջանակում կանաչ գործելառճի կարողությունների ու հմտությունների զարգացման նկատառումներով [6, 174-175]:



Գծապատկեր 2. Կանաչ ուսումնառության մեթոդաբանության ձևավորման առանցքային ուղղությունները անձի հարատև կրթության ընթացքում[1]

Հատկանշական է նաև ընդգծել, որ կանաչ կրթության վերջնարդյունքների կիրառելիությունը հանրային գնահատմանն է արժանանում, որը հետադարձ կապով արտացոլվում է բոլոր մակարդակներում իրականացվող ուսումնառության մեթոդաբանական շրջանակի վրա: Այսպես, եթե խոշոր կազմակերպության գրասենյակային տարածքներում ընդմիջման ժամերին լուսավորությունը չի թուլացվում, տպիչներով անխնա օգտագործվում է թուղթը, աշխատակիցները, շարունակաբար սուրճ խմելով, թղթյա բաժակները որպես վերամշակվող թափոն չեն տեսակավորում աղբամաններում, յուրաքանչյուրը աշխատանքի է ժամանում սեփական մեքենայով՝ բաց թողնելով հանրային տրանսպորտից օգտվելու հնարավորությունը, ապա կազմակերպության ղեկավարության համար այս ամենն ահազանգ պետք է հանդիսանա մտահոգիչ ուղերձ՝

[1] Կազմել են հեղինակները:

ներկայացնելու կրթություն իրականացնող համապատասխան կառույցներին՝ վերանայելու ուսումնական ծրագրերը և առավել հստակ թիրախավորելու անձերի կանաչ գործելաոճի վարքագծային ունակությունները:

Եզրակացություն: Կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանության ձևավորումը ուսումնառության համալիր մոտեցում է պահանջում ինչպես բովանդակային, այնպես էլ ժամանակային առումով, քանի որ ուսումնառության այս ձևը անձին ուղեկցում է իր ողջ կյանքի ընթացքում և ձևափոխությունների տարբեր փուլեր է անցնում: Ուստի կարծում ենք, որ կանաչ կրթության մեթոդաբանական ուղղությունները, լինելով բազմաշերտ, չպետք է մնան ստատիկ վիճակում, այլ պետք է շարունակաբար զարգանան և շաղկապվեն միմյանց հետ այնպես, որ անձի շուրջ իր ողջ կյանքի ընթացքում ձևավորվի կանաչ գործելաոճին նպաստող կրթական միջավայր ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուղիներով:

METHODOLOGICAL ISSUES OF ORGANIZING GREEN EDUCATION

Khachatryan Nonna
PhD, Associate Professor, Yerevan State University,
Republic of Armenia
nonnakhachatryan@ysu.am
Karapetyan Svetlana
PhD, Northern University,
Republic of Armenia
sveta.karapetyan@yahoo.com

Summary

The demand for green education is increasing dramatically as the planet's population grows. Humans cause enormous damage to the planet earth with their actions and domestic activities. Pursuing private interests, individuals generally do not pay attention to the negative consequences of their activities on the environment, which ultimately creates environmental and social risks, disrupts the sustainable development of the economy. In this regard, the development of a green education methodology that targets the lifelong learning of individuals is highlighted. Therefore, the present problem is the effective organization of green education in such a way that it continuously accompanies the individual throughout his life and has flexible transformational basis among different age groups. In the article, recommendations are made in terms of improving the methodological directions of green education in such a way that an educational environment conducive to green practices is formed around the individual throughout his life in formal, non-formal and informal ways.

Keywords: *green education, sustainable development, green behavior, environmental protection, eco-friendly, formal, non-formal and informal education.*

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ «ЗЕЛЕНОГО» ОБРАЗОВАНИЯ

Хачатрян Нонна
Кандидат экономических наук, доцент
Ереванский государственный университет,
Республика Армения
nonnakhachatryan@ysu.am
Карапетян Светлана
Кандидат педагогических наук,
Северный университет,
Республика Армения
sveta.karapetyan@yahoo.com

Аннотация

Спрос на «зеленое» образование резко возрастает по мере роста населения планеты. Человечество наносит колоссальный ущерб планете Земля своей производственной и бытовой деятельностью. Преследуя частные интересы, индивиды, как правило, не обращают внимания на негативные последствия своей деятельности для окружающей среды, что в конечном итоге создает экологические

и социальные риски, нарушает устойчивое развитие экономики. В связи с этим особое внимание уделяется разработке методологии зеленого образования, нацеленной на обучение личности на протяжении всей жизни. Актуальной проблемой является эффективная организация «зеленого» образования таким образом, чтобы оно постоянно сопровождало личность на протяжении всей его жизни и имело гибкие трансформационные основы среди разных возрастных групп. В статье даются рекомендации по совершенствованию методических направлений зеленого образования таким образом, чтобы на протяжении всей его жизни индивидума формальным, неформальным и информальным способами формировалась образовательная среда.

Ключевые слова: *зеленое образование, устойчивое развитие, зеленое поведение, защита окружающей среды, экодружелюбие, формальное, неформальное и информальное образование.*

Օգտագործված գրականության ցանկ

1. **Abdel Fattah, Hoda** (2015). How to make School attractive to the child. Fourth and second international scientific conference. Faculty of Education Port Said University entitled Towards a child-friendly school between April 18-19.
2. **Browning, M. and Rigolon, A.** (2019). School Green Space and Its Impact on Academic Performance: A Systematic Literature Review. Int. J. Environ. Res. Public Health 2019, 16, 429.
3. **Chakraborty, A., Singh, M., Roy, M.** (2018). Green Curriculum Analysis in Technological Education. International Journal of Progressive Education, Volume 14 Number 1, 2018
4. **Ghanem, Tafida** (2020). The inclusion of national and International Sustainable Development Goals in the curricula of Public Education proposed vision –the tenth Conference of the Faculty of Arts BeniSuef University towards building a strategy for sustainable development in Upper Egypt under the humanities.
5. **Keziz, Amal** (2019). Sustainable green school and the culture of Environmental Education – International and Arab models about the Green School - Journal of Human Sciences and society. Volume 8, No. 1, pp. 155-179.
6. **Hakobyan A., Tshughuryan A., & Martirosyan G.,** (2023) “The Integrated Reporting Philosophy in Business Strategy” //“Wisdom” Scientific journal, Yerevan, 1(25), pp. 169-76. doi: 10.24234/wisdom.v25i1.978.
7. **Iluta Arbidane., Nonna Khachatryan, Narine Martirosyan,** (2023) Issues of Accounting information disclosure for ecosystem services, //”Economic, Finance and Accounting” journal, no 2, pp 87-108, doi:10.59503/29538009-2023.2.12-87
8. **Iwan, A. and Rao, N**. (2017). The Green School Concept: Perspectives of Stakeholders from Award-Winning Green Preschools in Bali, Berkeley, and Hong Kong. Journal of Sustainability Education, no. 16.
9. **Tshughuryan A, Khachatryan N.** (2023), Ecosystem services financial management information security issues, History and politics scientific journal, (2), 25, pp: 71-94 doi: 10.59630/10.59630/25792644-2023.2.25-71.

Получено: 26.03.2024 *Received: 26.03.2024*
Рассмотрено: 08.04.2024 *Reviewed: 08.04.2024*
Принято: 12.05.2024 *Accepted: 12.05.2024*

© The Author(s) 2024
This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License